ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ «Արարատ համայնքի Սուրենավան գյուղի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ում 0.585 դրույքով դաստիարակի թափուր հաստիքը համալրելու համար:

Դաստիարակի համար նախատեսված վարձատրությունը՝ ըստ ավագանու որոշմամբ հաստատված հաստիքացուցակի: Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման և հարցազրույցի փուլերը անցկացվում են ըստ ՀՀ ԿԳՄՍՆ 22.10.2024թ. թիվ 1981-Ա/2 հրամանով հաստատված հարցաշարերի:

Հարցազրույցի փուլն անցկացվում է յուրաքանչյուր մասնակցի հետ առանձին:

Մրցույթին կարող է մասնակցել հաստատության տվյալ թափուր պաշտոնին ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2024 թվականի մարտի 27-ի N 20-Ն հրամանով սահմանված տարիֆաորակավորման պահանջներին համապատասխանող անձը:

Մրցույթին մասնակցելու համար ներկայացնել՝

1. Դիմում /Ձև 1/ ,
2. Միջին մասնագիտական կամ բարձրագույն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ /դիպլոմ/ ,
3. Անձը հաստատող փաստաթուղթ,
4. Աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ /առկայության դեպքում/ ,
5. Ինքնակենսագրություն /Ձև 4/ ,
6. Մեկ լուսանկար՝ 3 x 4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
8. Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական,
9. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր /դրանց առկայության դեպքում/ :

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը ներկայացված փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ, բնօրինակները վերադարձնում:

Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկը ամբողջական չէ, կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել թերությունները և համալրել փաստաթղթերի ցանկը:

Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ընդունվում են www.araratcity.am կայքում հայտարարությունը հրապարակելու օրվանից՝ 20 աշխատանքային օրվա ընթացքում՝ **02.09.2026թ.-ից մինչև 30.09.2026թ.** ներառյալ, յուրաքանչյուր աշխատանքային օր՝ ժամը 10:00-17:00-ը՝ հետևյալ հասցեով՝ **գ. Սուրենավան, Բարեկամության 23** :

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա ս/թ հոկտեմբերի 6-ին, ժամը՝ 11:00-ին, «Արարատ համայնքի Սուրենավան գյուղի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ում:

Հասցե՝ **գ. Սուրենավան, Բարեկամության 23:**

Էլեկտրոնային հասցե՝ surenavanmankapartez2022@gmail.com

Տեղեկությունների համար զանգահարել 077-80-88-27 հեռախոսահամարով: